

ԴՐԱԿԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

ԱՐՇԱԿ Զ Օ Պ Ա Ն Ե Ա Ն Ի

16

(Նախորդին նման) :

Փարիզ, 9 նիւ Սէյ

30 Յունիուս 1932

Սիրելի Պ. Քիւրտեան,

Ինչքա՞ն ամօթով եմ որ ձեր նամակին այսպահ ուշ կը պատասխանեմ : Հասուցէք թէ ինչքան ծանրաբեռնուած եմ սպառչէ աշխատութիւններով եւ մըտահոգութիւններով, որ այդպիսի նամակներու իսկ շուրջ պատասխաններու անկարող կը մնամ :

Միծապէս ուրախ եղայ իմանալով ձեր ամուսնութիւնը ընտիր լիմերիկուհիի մը հետ : Կը խնդրեմ որ ընդունիք սրտագին բարեմաղթութիւններս եւ չորհաւորութիւններս :

Անգամ մը եւս կ'ըսեմ թէ ցաւալի բան եղաւ որ ձեզ չկրցայ տեսնել Փարիզէն անցնելնուդ : Շատ բան կրնայիք ինծի պատմել, եւ ես բաւական հարցումներ ունեի ընկերու :

Կ'ըմբառնեմ ինչ ըսել կ'ուզէք Սինի խմբագրականին համամիտ չըլլաւով : Բայց ես համոզուած կը մնամ որ իմ բռնած դիրքս աւելի օգտակար է կօմիածնին եւ Սինինը խոհեմ չէք :

Գարեգին Սրբազնէն վերջերս ստացայ չահեկան եւ ընդարձակ նամակ մը և աղուոր յօդուած մը, զոր պիտի հրատարակեմ 5-6 թիւին մէջ : Կ'ըսէ թէ տեսեր է Անահիւտները (հաւանօրէն Նոր Նախիջնեանի մէջ), ուր ստացող մը կայ, մինչ երեւանի եւ իջմիածնի մէջ այլեւս չեն յանձններ իրենց հասցէներուն (բայց իրենք՝ համայնավարները՝ կը պահէն իրենց համար ու կը կարդան) : Պիտի զրկեմ իր յօդուածները՝ պահարանի մէջ : Վերջերս առողջութիւնը տկարացաւ : Զգային զրութիւն յոզնած է : Վրայէ վրայ երկու անգամ կրիփի (ծանր հարրուխ) բռնուեցայ : Դեռ տկար եմ, անոր համար ընկելիք բաներս (որ շատ տեսակ են) մերթ ուշ կ'ընեմ :

Անահիւտի բաժանորդները այնքան ուշ կը վճարեն ատենէ մը ի վեր, եւ շատեր զես չեն վճարած թէ՛ Բ. եւ թէ՛ Գ. տարին, որ սահմանացայ այս տարի երեք միացեալ թիւ հանելու որոշում տալ, տակէն ելլելու համար, ու նորէն մէծ դժուարութեանց մէջ եմ : Նիւ Եորք 50—60 բաժանորդներէն հազիւ 2—3 հոգի զետ վճարած են Գ. տարին, եւ ոմանք Բ. տարին ալ չեն վճարած : Շիքա-

կոչն Գ. տարին զեռ զրեթէ ոչ ոք չէ վճարած։ Նոյնպէս Գահիրէէն։ 5—6 թիւը պիտի երթայ գարնան վիրջները (Փետրուարի վերջը Պուքը կ'երթամ և պիտի մնամ հոն մինչեւ Մարտ 15, երեք Փրանսերէն դասախոսութիւն ընելու հրաւաւուած եմ), որով Մայիսի վիրջը, Յունիսի սկիզբները կ'երեւայ 5—6 թիւը, անոր մէջ պիտի հրատարակեմ ձեր էզիւտին կէսը, եւ պիտի ջանամ՝ եթէ կարելի ըլլայ՝ ամբողջը մէկանց հրատարակել։ 100 օրինակ զրքոյկով յետոյ տպելու հոգ կ'ընեմ, վստահ եղէք։ Մախքն ալ կ'իմացնեմ ձեզի, երբ առներ դայ։ Հիմակուց դրկելնուղ պէտք չկայ։

Բնդունեցէք սիրայիր բարեւներու։

Ա. Զապահեան

Նախօրութիւն։ — Սիոնի խմբագրականը որուն կ'ակնարկէ Զապահեան, 1931 Օգոստոսի թիւին մէջ հրատարակուածն է։

17

(Նման նախորդին, վեց քեր)։

Նախակին սկիզբը՝ վերեւ։ «Ուզած էք որ զրկեմ 1911ի (Անահիտի) 3—4 և 5—6 թիւերը։ 1911 թէ 1931, ճշգեցէք, որ սխալ չզրկեմ»։

Փարփակ, 5 Յուլիս 1932

Սիրելի Պ. Քիւրտեան,

Ստացած եմ ձեր Մարտ 11ի և Ապրիլ 13ի նամակները և երկու յօդուածները, ինչպէս եւ ձեր զրքոյկը։ Շատ կը ցաւիմ որ պատասխանս այսքան ծայրահեղորէն ուշացաւ։ Անուններից շրջան մը անցուցի այս վիրջին ատենները, առոջութիւնն աղէկ չէր։ Նիւթական կացութիւնու շատ իսպուտ։ Բարգմատեակ զրազումներուն և մաշեցնող մտահոգութեանց ճնշումը աւելի քան երբէք ծանր էր վրաս։ Խոկ նամակները որոնց պէտք է պատասխանել, հետզհետէ անհամար կը գտանան, եւ ուժերս չեն հասնից այս բոլորին։ Զեղբ ուղղելիք պատասխանիս ուշ մնալուն պատճառները ասոնք են։ Անշուշտ ներողամիտ կ'ըլլաք։ Հիմա, առողջութիւնու աւելի աղէկ է համեմատարար, բայց նիւթական դժուարութեանց դեռ հեռու եմ յողթած ըլլալէ։ Այդ դժուարութեանց դիյաւոր պատճառը Անահիտի բաժանորդներուն մէկ ստուար մտան բաժնեգինը չափազանց ուշ վճարելն է։ Ահազին առնելիք ունիմ, խոկ ես զբաժագլուխ չունիմ, ամիսներ կ'անցնին, պէտք է ծախսել, պէտք է Անահիտի տպագրութեան ու փոսթի դրամ ձարել։ Միմիայն Ամերիկայէն 20,000 ֆրանքէն աւելի առնելիք ունիմ, երբորդ, նոյնիսկ երկրորդ տարուան բաժնեգիններ որ չեն վճարուած, նոյնիսկ հոս Փարփակ՝ 8000 ֆրանք առնելիք ունիմ։ Պէտք է անընդ հատ զրել զործակալներու, յիշեցնել, սիրտ մաշեցնել, ժամանակ եւ ուժ սպասող աշխատութիւն մը անփերջ։ Ասոր համար Անահիտի 5—6 թիւն ալ ուշ մնաց։ Վիրջապէս աւարտեցաւ 5—6 թիւին տպագրութիւնը, եւ քանի մը օրէն փօսթին կը յանձնեմ։ Այս մնաց, բայց շատ հոխ թիւ մը եղաւ։ Զեր ընդարձակ յօդուածը Արաք եւ Հայ Գեղարքուեանի Յարաքերութեան մասին տուած էի ուր-

պաղբելու և այս թիւին մէջ պիտի երեւար ու նաև առանձին զրքոյկով պիտի տպուէք, եթի հասան ձեր երկու յօդուածները, այդ յօդուածներէն կարեւուրագոյնք՝ Հայաստանի Հնութեանց Պահպանութեան Քօմիթէին վրայ զրածներէ : Երկուքը միասին հրատարակել կարելի չէր, չափազանց շատ նիւթ ունիմ զիզուած, որ կարդի կը սպասեն, անոր համար այս թիւին մէջ ուր կայ նաև Սաղրզեանի մէկ յօդուածը զորգերու վրայ, որոշեցի հրատարակել Հնութեանց կոմիտէի մասին ձեր այդ յօդուածը, իսկ «Արար և Հայ Գեղարուեատ»ի յօդուածը յատաձգել յառաջնկայ թիւին : Հնմա որ այս 5—6 թիւը ելաւ, տպագրիչին ըստ եմ որ է՞ն առաջ ձեր յօդուածը շարէ, քլիչէները պատրաստ են արդէն, երեքուէիս 4 ամիսին Դ. տարիի 1—2 թիւը լույս կը տեսնէ, եւ անոր մէջ անպատճառ կ'երեւայ ձեր յօդուածը : Գրքոյկի ձեւով 200 օրինակի տպագրութեան համար ծախքը պիտի ըլլայ, ինչպէս կը տեսնուի տպագրիչ Պ. Թիւրապեանի տուած Հաշիւէն, 700 Անահիտի թուղթով կամ 850 Փրանք քուչէ փայլուն թղթով : Եթէ կ'ուզէք, այդ զումարը կամ գէթ կէսը այժմէն զրկեցէք : Գալով «որմանկարներու յօդուած»ին կրնայ Դ. տարուան 3—4 կամ 5—6 թիւին մէջ հրատարակուիլ : Եթէ շատ ուշ կը մնայ ձեզի համար, զրեցէք եւ զարձնեմ ձեզի, ուրիշ տեղ կը հրատարակէք : Պէտք է ըսմէ որ (արտաքին լուսանցքին «Կ'ուզէք որ ձեր այս Դ. գրքոյկր «Վիշապ»ի զրքոյկին Փօրման ունենայ : Կարելի է, բայց քիչ լուսանցք կը մնայ, աղուոր չերեւար») որմանը կարներու երկու պատկերները իբրարու շատ կը նմանին, եւ քիչ չահեկան են, աւելի ինքնատիպ, ճոխ պատկերներ չկային, եւ աւելի այլապան, բազմաթիւ : Ինչ որ է : «Հնութեանց» յօդուածին պատկերներն ալ անբաւական են, տառնց մէջ աւելի Աշխարհէկոր որոշ կ'երեւայ քան հաւաքուած առարկաները : Պէտք էր այդ յօդուածին ընկերացնել աւելի բազմաթիւ եւ աւելի հետաքրքրական ու որոշ տեսնուող պատկերներ : Ինչ որ է : 5—6 թիւին երեւալէն եւ ամէն մարդ ձեր յօդուածը կարգալին ետքն է որ՝ այսինքն քիչ օրէն՝ պիտի կազմեմ քօմիթէ մը, այդ 1000 տոլարը հաւաքելու և հարկ եղած առարկաները զնելով զրքելու համար : Զիս դժուար զրութեան մէջ զրիք այդ յօդուածով : Այս մէջոցին ես բոլոր ուժերս յարելու եմ Անահիտի եւ իմ նիւթեական կացութիւնը զօրացնելու համար, քօմիթէ կարգել, Հանգանակութիւնն ըանալ՝ ատոր կը վնասն : Բայց այդ Հնութեանց հաւաքման զործը այնքան օդատկար ու ոգեւորիչ է, որ ամէն նկատում մէկդի զրի եւ որոշեցի ձեր առաջարկը զործադրել : Եթի կազմեմ քօմիթէն, Ապագայի մէջ յօդուած մը պիտի հրատարակեմ, քօմիթէի անունները հոն պիտի դնեմ, եւ կոչ պիտի ուղղեմ զումարները զրկել զանձապահին : Պէտք պիտի ըլլայ ատոր համար նաև նամակներ զրել բազմաթիւ անձերու կամ անձամբ դիմում ընել, այլապէս զրամ չի զար : Որով ալ անշուշտ պիտի ջանամ Ամերիկային քիչ մը զրամ զանել ատոր համար ու զրկել : Կը յօւսամ Անահիտի Դ. տարուան 1—2 թիւին մէջ արդէն նուէրներու լաւ ցուցակ մը կարող կ'ըլլամ հրատարակել : Եթի 1000 տոլար մէջտեղ հանենք, յետոյ կ'աշխատինք տարին 300 տոլար ճարել :

Հատ ցաւեցայ եւ նեղուեցայ որ ձեր երկար ճամբրորդութենէն յետոյ եր Փարիզ դարձաք, ձեզ չկրցայ տեսնել : Անհրաժեշտ էր որ տեսնէիք զիս : Առաջուց զրելու էիք որ սպասէի, որպէսզի անպատճառ տեսնուէինք : Անշուշտ շատ շահեկան եւ կարեւոր բաներ պիտի ունենայիք ինձի պատմելու : Ձեմ զիսեր ինչո՞ւ գէթ նամակով չէք ըսներ ինձի ձեր պատմելիքներուն գէթ էական մասը : Գրեր էք թէ ատոնք նամակով չեն ըսուիր : Ինչո՞ւ չեն ըսուիր, նամակը ռէզօմանտ կ'ընէք, չի կորսուիր, իսկ ես այսպիսի նամակներ միմիւայն ես կը տեսնեմ և յետոյ կը չնչիմ : Իմ խորհրդապահութիւնս բացարձակ է :

Սիսնին գրածը սխալ է, մի՛ պնդէք այդ մասին, այնքան սխալ է, որ լմբոններ են սխալը եւ դարձանեցին՝ իմ ուզած ձեւովս։ Ու կաթողիկոսական ընարութեան ժողովին թուականն ալ ահա որոշուեր է։ Խորէն արքեպիսկոպոս Պոլսոյ պատրիարքարքանին հեռազրեր է պաշտօնապէս թէ ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Նոյեմբեր 10ին։ Աւրեմն ես այդ մասին լաւատես ըլլալու իրաւունք ունէի, և թերահաւատներուն վայնառունը սխալ ելաւ։ Տեսնենք միջացներ պիտի գտնուին որպէսպի ես ալ իրը Լիոնի պատգամաւոր երթամ այդ ժողովին։ Լիոնի թեմը «մէկ Քրանք չեմ կրնար տալ» կ'ըսէ, ուրիշ տեղէ ճարել դժուար է ներկայ տաղնապի օրերուն։ Տեսնանք ինչպէ՛ս կը լուծուի այդ հարցը։

Զեր զրբոյկին վրայ յօդուած զրել անհնար էր, արդէն երկու ընդարձակ յօդուած ունիմ այս թիւին մէջ։ Բայց քրոնիկիս մէջ յիշատակած եմ ձեր զրբոյկը։ Զեր արտադրութեանց մէջ լաւ բաներ կան, հետախոյզ միտք ունիք, ևսունդ ունիք, աշխատանէր էք, բայց շատ կ'աճատպարէք, խոր եւ երկար ուսումնասիրութեան տան չտուած, վարկածներու համար ամուր փաստեր չըգտած, կը շատապէք մէրթ մէջտեղ նետել յօդուածները, եւ ձեր ոճն ալ, զրելու եղանակն ալ անկատար է մէրթ, անուղիղ բացատրութիւններ, դէշ յօրինուած ֆրազներ կան հռն, եւ ազգասիրական կրակը չափաղանց կը զգացուի, գիտական չափաւորութեան եւ ճշգասիրութեան վնասելով։ Եթէ մօսս ըլլայիք, ձեր մէկ յօդուածը մէկտեղ աչքէ կ'անցնէինք, եւ շուշ ի վիճակի կ'ըլլայիք այդ թերութիւններէն մաքրել ձեր յօդուածները։ «Արար եւ Հայ Գեղարուեստ»ի ձեր յօդուածին ոճը բաւական կ'ուկել ջանացած եմ, աւելորդ բաներ հանած եմ, շովէն ծայրահեղ ամբողջ հասուած մը ջնջած եմ, ատով յօդուածը վստահ եղէք որ շահ կը շահէ եւ բան մը չի կորոնցներ իր արժէքէն։

Սիրալիր բարեւներով

Զերդ

Ա. Զապանեան

Մանօրութիւն. — Բնաւ հաւանական չէր որ երէ Զապանեան անձամբ ալ տեսնայի յայտնէի իմ անձնական տպաւորութիւններս կորի. Հայաստանի մասին, որոնք ես ունեցայ հոն 1931ի այցելութեան առքի, որովհետեւ բացարձակապէս անոր բաղաքական կենակոյ ո՛չ այն ասեն եւ ո՛չ ալ հիմա գրադի կամ բանավիճիլ կը ցանկամ։ Խոկ հոն անհատներու հետ ունեցած յարաբերութիւններս յաւիտեան ինձի պահած եմ ու կը պահեմ։ Նախ ատոնք ինձի վստահուած արտայայտութիւններ, զաղտմիքներ էին եւ դեռ կան որ են։ Յետոյ ատոնց յայտնութիլը նայնիսկ ուրիշ անձի մը որեւէ օգուտ չունենալէ բացի՝ կը վնասէ։ 1931ի այցելութենէս վերջ ինչ որ կ'ուզեի ըսել արդէն ըսի «Հայաստանի Հնութիւններու Փահպանութեան Կոմիտէ»ի մասին գրածովս (ինչպէս նաև «Պօղոս-Պետրոս Եկեղեցոյն Արմանկարներ»ու յօդուածովս որ հրատարակուեցաւ Անահիտի մէջ)։ Դժբախտ եւ ամօք-աքեր «հանգամակութիւն»ը ուրան մասին այս եւ յաջորդ նամակին մէջ Զապանեան կը խօսի, Հայաստանի Հնութեանց Փահպանութեան Կոմիտէին կերպով մը աշակից ըլլալու համար տուաջարկած էի։ Յանձնախումբը Զապանեան կը կազմէր իր բարեկամներուն մէկ ստուար խումբով (ուր անփականկատութեամբ անունս չէր դրեր), որնցից ունանք սանդիմ մը իսկ չէին տուած իրենց անդամ եղած յանձնախումբին հանգանակութեան եւ տուող «Երեւելիներ»ուն մէջ կը վխտային տուարէ

մը նուազ «նուիրաբերող»ներ, կարծես թէ այս հանգանակութենէն առելի կարեւոր քան մը ըրած ըլլային իրենց կեանքին մէջ : Այդ ողորմելի «հանգանակուրինք»ը անպատճարերօրէն 3250 ֆրանքի նղնիմ գումարի մը յանգեցաւ ... երկու տարուան մէջ 150 տոլարի հաւասար քան մը, որուն պատմութեամբ հետաքրքրուողը կրնայ գոնին Անուհոտի այդ շրջանի թիւերուն մէջ :

Զապանեան նիշդ չէ երբ կ'ըսէ որ Սիոն նշղեց իր «սխալ»ը (Տե՛ս Սիոնի «Լոռւթեան Պատգամը» Խմբագրականը) : Հոն ոչինչ կար որ Զապանեան կարենար ըսել այդ սխալը «գարմանեցին» իմ ուզած ձեւովսա» : Հոս բնական է տեղը չէ այդ մասին վիճելու : Յաջորդ Խմբագրականները Սիոն գրեց ինչպէս որ պէտք էր զրուէին («Անդրադարձութիւններ») : Սակայն իրականութիւնը մընաց եղածին պէս, հակառակ արտասահմանեան ցանկութեանց :

Զապանեան անտարակոյս իրաւունք ունէր ըսելու ինչ որ գրած է իմ հայերէնիս մասին, սակայն աշխատելու կամ ուսումնասիրիու կերպիս մասին աւելորդ է իր ըմբռնումը, քանի որ նոյնիսկ այն ատենուան ուսումնասիրութիւններս ցոյց կու տան նախ բննելու եւ փաստելու, և անիկ վերջ արտայայտուելու խոր ցանկութիւն : Հոս պաշտպանողականի կարիք չիմ ստաներ :

18

(Նախորդին նման չորս թերթ :)

Փարիզ, 11 Սեպտ. 1932

Սիրելի Պ. Քիւրտեան,

Ստացած եմ ձեր Յուլիս 18 և 25 թուակիր երկու նամակները, որոնց զժրախտարար նորէն բաւական ուշ կը պատասխանեմ :

Հայաստանի Հնութեանց Պահպանութեան Կոմիտէին Համար Հանդանակութիւն ընող յանձնախումբը զեռ անհնար Եղաւ կազմել, որովհետեւ ամառ եկաւ եւ ամէնքը այս ու այն կողմ զիւզագնացութեան ցրուեցան, այս ամսու վերջերը միայն հնարաւոր պիտի ըլլայ կազմել այդ մարմինը : Թող ուշ ըլլայ, բայց լուրջ, որպէսզի լու զործ տեսնէ : Նորէն կ'ըսեմ որ չատ գժուար բան է որ վրաս առի : Շատ աննպաստ տարի է, «քրիզ կայ» յանկերգը ամէնուն բիրանն է, ունէ բանի, նոյնիսկ էտկան բաներու, զրամ տալ կը գժուարին, ո՞ւր մնաց Հնութեանց Պահպ. Կոմիտէի : Երեւակայեցէք որ էջմիածնայ եկեղեցական ժողովին պիտի կարենա՞մ իբր Լիոնի պատգամաւոր երթալ կոմ ոչ, զես չեմ զիտեր : Եախ ատոր զրամը գտնելու է, եւ շատ գժուար կ'երեւայ ... :

Քանի որ ուշ կը մնայ յանձնախումբին կազմութիւնը, այլեւս ուղղակի Անահիտին յաջորդ թիւին մէջ կը ծանուցանեմ (և ոչ թէ նախ Ապագայի) անոր կազմուած ըլլալը եւ կը հրատարակեմ ինչ զումար որ առաջին բոպէին կարենանք հաւաքել : Անահիտի Դ. տարուան 1—2 թիւը մէծ մասամբ շարուած է եւ կը յուսած որ լոյս կը տեսնէ Հոկտ. 1—20ին (այսինքն մեկնելէս քիչ առաջ, ևթէ ... կարենամ մեկնիլ) :

Ձեր «Հայ—Արար Գեղ»-ը յօդուածին զրքոյկի ձեւով տպագրութիւնը ուրեմն 100 օրինակով պիտի ըլլայ, ինչպէս կը գրէք, Անահիտի թղթին վրայ,

այդ պարագային արգէն 700 Փրանքէն պակաս կ'ըլլայ ծախքը անշուշտ : Խօսեցայ Պ. Թիւրապեանին , 700 օրինակ , թուղթ , տպագրութիւն , կողք , կազմ , պիտի արժէ ձեզի 600 Փրանք : Կ'ըսէ թէ Ա . Հազար հարուստ է , կրնայ եթէ ուղէ մերթ մեծ գեղչ ընել , թէ իր գինը սուր չէ , եւն : . Զանացի որ աւելի զեղչ տամ , այսքանին յաջողեցայ : Կը յուսամ որ կ'ընդունէիք : Հանեցէք այդ զումարին կէսը այժմէն զրկել , կամ ամբողջ , կէսը հիմա կռւ տամ իրեն , կէսն ալ տպագրութիւնն ու կազմը վերջացնելէ ու ձեզի զրկուելէն անմիջապէս յետոյ : Մաւալը պիտի ըլլայ «Վիշապ»ին պէս :

Որմանկարներու ձեր յօդուածը կ'ուղեմ պահել եւ Յ—Ա թիւին մէջ հրաբուտարակել : Եթէ երթամ Երեւան , այդ որմանկարներէն պիտի ջանամ քանի մը ուրիշ ու լաւագոյն պատկերներ ալ առնել եւ միսախն Հրաբուտարակել : Սիսնի յօդուածներուն , կէմիածնի եւն . մասին չեմ գրեր այլեւս , որովհետեւ ձեր պատասխանները խորհրդաւոր , կիսասքող , տռեղծուածային են : Բսի ձեզի որ այնտեղի կացութիւնը ինծի անծանօթ չէ բնաւ իր շատ մը ծալքերով : Ձեր անձամբ տեսածը ու լսածն ալ կրնայիք խորհրդապահաբար յանձնաբարեալ նամակով հաղորդել ինծի : Շատ կարեւոր ու պատասխանատու անձեր այլպիսի բաններ ինծի մտերմօրէն կը հաղորդեն , բայց մարդ չիմանար , որովհետեւ ինծի խորհրդապահաբար արուած բան մը ինձմէ զատ մարդ չիմանար երրէք : Դուք չէք ուղեր յայտնել ինչ որ դիտէք : Չեմ պնդեր :

Տեղեկութիւնները զոր տուած էիք ձեր ընտանիքի մասին շատ շահեկան են : Արդէն ուշազբառ դէմքեր արտազրած ընտանիք մըն է , որոնցմէ Ասկան Մարտիկեանը մանաւանդ շատ կարող մարդ եւ շատ լաւ հոյ է : Երուսաղէմի վանքը շատ պիտի օդտուի անկից : Ձեր մէջ ալ կայ անոնց ազգասիրութիւնը եւ եռանդը , զոր ևս միշտ զնահատած եմ : Դիմուզութիւնս ձեր շատ բան մէկն ու շուտ ընել ուղելու մասին էր , եւ ձեր լեզուի ու ոճի մեծ թերութեանց , որ ոչ միայն անզիտութեան , այլ եւ աճապարանքի արգիւնք են : Վրասահ եմ որ այդ թերութիւնները կը յաջողիք շուտով դուք իսկ ինքնաքնազառութեամբ եւ ինքնոյնութեամբ որբազրել : Երբ «Արար—Հայ Գեղ» յօդուածնիդ երեւայ , ձեռագիրներ կը զրկիմ ձեզի որ տեսնաք թէ ի՞նչ աւելորդ ու տրկար մասեր յապաւած եմ եւ ինչ թերի կամ անուղիղ փրազներ շտկած կոկած եմ : Ատիկա կրնայ արդէն ձեզի առաջնորդ ըլլալ : Վիշապի խորհոյն զալով , ես երրէք խորհած չեմ թէ վիշապը Հայաստանի մէջ շատ հին ատելներէ պաշտրւած ըլլալը վիճելի զաղափար է , ատիկա յայտնի բան է : Բայց մէր հին վիշապը խոչոր , հոկայ օճ է , մինչ չինական նկարներու եւ արձաններու վիշապը ուրիշ բան եւ (թաթերով , եւն .) որ թերեւս ատիկա զոյտութիւն ունեցած է , թերեւս ալ երեւակարուած է : Ատոր համար է որ զորդերու վրայի վիշապը չինական է , եւ ոչ մէր հին օճ—վիշապը : Իսկ թէ փիմանիկը փիմանիկ չէ , այլ արծիւ , շահեկան մարկած է , բայց զոր պէտք է ասպացուցանել : Նկատեցէք որ փիմանիկն ալ երեւակայական թռչուն է :

Անահիտի 1911ի թիւ Յ—Ա եւ 5—6-ը այսօր կը զրկեմ ձեզի , Փարիզի Գրահան Ակումբին մէջ խօսած բանախօսութիւնն Խայեամի եւ Քուչակի մասին՝ զրի առնուած չէր , նօթերու վրայէն խօսեցայ , այնպէս որ չեմ կրնար զրկել ձեզի : Խօղըրիի Բ . Հատորը զրերէ սպառած է , այնպէս որ դժբախտաբար չեմ կրնար զրկել ձեզի : Անահիտի վերջին (5—6) թիւէն մէկ օրինակ զրբեած էի , հառ մըն ալ կը զրկեմ այսօր :

Թլկուրանցիի անունով անտիոկ տաղը զոր հրաբուտակած էք Բազմավէտի մէջ շահեկան է , շատ վերասլաց (կարծեօք) : Այդ մասին թերեւս զրեմ Անահիտի մէջ : Երեւան Հնութեանց Պահպանութեան կոմիտէին պիտի զրկեմ

5—6 թիւր և Դ. առարույ 1—2 թիւր միասին։ Զեր տուած լուրերը (Աշխարհ-րէկ Հրապարակէն Հնացուած, ևն.) չատ տիսուր են։ Անահիտի 5—6 թիւրն մէկ քանի օրինակներ զէ կազմուած էին, կը ցաւիմ որ ձեզի այդ զէ օրի-նակներէն մէն զրկուեր է։ Այսօր կը զրկեմ երկու օրինակ այդ թիւրն՝ լիա-կատար։

Սազրդեանի յօդուածին այդ նկարին թէրս տպուած ըլլալը տպուելէն ետքը տեսանք, փորձին մէջ ճիշդ էր, մեքենավարը հաներ փոխեր է . . . այլիւս չի շակուիր այդպիսի բան։ գիտողութիւն ըրի։ Հնութ. Պահ. Կոմիտէի երկու յուսանկարներն ալ կը զարձնեմ։ Գարեզին Սրբազնին զրկած եմ իր յօդուած-ները կտրուած և պահարանի մէջ։ Կը չանամ ձերն ալ կարել ուղարկել (եթէ ժամանակ, ուժ եւ զրամ ունենամ)։ Շահեկան կ'ըլլայ եթէ զուք զրկէք իրեն ձեր յօդուածը. գիտէք որ բեռն չափազանց ծանր է, եւ չարիւր բան ունիմ ը-նելու . . . Յաւեցայ որ Քուչակին նոր չարքը Բազմավիշին զրկեր էք։ Միւս-ները (Թլկուրանցին, Ֆրիկ, ևն.) հոգ չէ, բայց Քուչակները Անահիտին մէջ Հրապարակուելու էր։ Ես ալ զեռ ունիմ չատ նոր Քուչակնեան տաղեր Հրատա-րուկելու։ Ուրիշ անդամ եթէ Քուչակ զտնէք, ինձի զրկեցէք։

Սիրալիր բարեւներով

Զերդ

Ա. Զոլոմնեան

Ծանօթութիւն. — Պօղոս—Պետրոս Եկեղեցւոյ (Երեւանի) որմանկար-ներուն, ինչպէս նաև Հնութեանց Պահպանութեան Կոմիտէի յօդուածին հետ գործածելի նկարները Երեւան ինծի տրուածներն էին, ուր դիրութեան պա-կասի պատճառով ո'չ աւելի լաւ եւ ո'չ ալ աւելի շատ նկար կրնային հայրայ-րել, ինչպէս որ Զօպանեան ինքն իսկ վերահսառ եղաւ երը կարն ժամանակ վերջ Երեւան զնաց։ Թլկուրանցիի անտիպ տաղը որ կը յիշէ, երատարակուած եր Բազմավիշով 1932, էջ 278ի մէջ, իսկ Քուչակնեան նոր տաղաշարքը՝ անդ, էջ 464։ Թլկուրանցիի եւ Քուչակի անտիպներ որպէս Զօպանեանին դրկած էի, իր անուանք երատարակեց. բան մը՝ որ գտնելէ վերջ ինքն ալ կրնայի կատա-րել, մանաւանդ առանց անոնց ձեռք զարնելու։

(Նախորդին նման։ Երկու քերք։)

Փարիզ, 9 միւ Սէյ
16 Հոկտ. 1932

Սիրելի Պ. Քիւրտեան,

Ստացայ ձեր Սեպտ. 31 թուակիր նամակը և ներփակ տառը տուարի չէքը, զոր զրկած էք ձեր յօդուածին զրքոյկի ձեւով Հրատարակման ժամանե-րուն առ Հաջի և զոր երէկ յանձնեցի Պ. Թիւրազեանին. ինք ձեզի ստացա-րիր կը զրկէ։

Զեր յօդուածը Պօղոս—Պետրոս եկեղեցին վրայ լոյս պիտի տեսնէ Անահիտի այս տարուան 3—4 թիւին մէջ, արդէն Հայուստան երթուղարձիս ըստասելու պէտք չմնաց, որովհետեւ Փարիզի եկեղեցւոյ Վարչութիւնը որուն վրայ յոյս դրած էինք ճամբրու ծախփերը ճարելու համար, բացարձակապէս յուսախար ըրաւ զիս: Ենիթական անկարելիութեան մէջ ևմ այդ ճամբրորդութիւնը ընելու: Զեր ձեռագիրը տուի արդէն Պ. Թիւրապեանին՝ շարուելու համար:

Անահիտի 1—2 թիւին տպագրութիւնը մեծ մտսամբ վերջացած է: Թիւր լոյս կը տեսնէ 18 օրէն:

Զեր նամակը ուչ հասաւ, ձեր յօդուածը պարունակող Փօրմաները բաւական օր առաջ տպուած են արդէն, եւ զրգոյկի ձեւով տպագրութիւնն ալ եղած է 100 օրինակ, ինչպէս ուղած էիք ձեր նախորդ նամակով: Այլեւս 100 օրինակ եւս տպել անկարելի է, որովհետեւ շարուածքը չէ պահուած: Կը մնայ միայն կողքը տպել: Զեր զրկած կողքի նմուշը տուի Պ. Թիւրապեանին, որ առոր համեմատ շարել տայ կողքին տիտղոսը եւ թուղթին գոյնն ալ ջանայ առոր պէս ընել:

Հայ. Հնութ. Պահպ. Կոմիտէին աջակցող յանձնախումբը կազմեցի եւ արդէն 3000 Փրանքի մօտ Հաւաքած էնք (ձեր 10 տոլարն ալ մէկտեղ): Անահիտի մէջ պիտի տեսնէք յանձնախումբին անունները եւ Հանդանակութեան առաջին ցուցակը: Դժուար գործ է (այսպիսի բուպէի մանաւանդ) եւ պիտի վրենասէ Անահիտին օր ինքն իսկ շատ մեծ նեղութեան մէջ է, բայց որոշեցի կատարել ձեր առաջարկը ու պիտի յաջողցնեմ զայն:

Վիշապին մեր երկրին մէջ հին ատեն (նախահայկական շրջանին) օձի կամ ձուկի ձեւով ըմբռնուելուն (եւ ոչ չինական թեւաւոր հրէշին ձեռով) ապացոյցը ձեր բերած պատկերին մէջ է որ զտայ: Բայց եթէ կան նաև թեւաւոր հրէշին պէս հին արձաններ կամ պատկերներ Հայուստանի մէջ զտնուած, անշուշտ առիկա շատ շահեկան է:

Նորէն կ'ըսեմ որ Քուչակի շարք Անահիտի չղրկելնիդ ցաւ պատճառեց ինձի: Գիտէք որ Քուչակով ես ևմ որ զրտղած ևմ միշտ, Անահիտի մէջ այժմ իսկ կը հրատարակեմ ընդարձակ շարքեր (պիտի տեսնէք 1—2 եւ 3—4 թիւերուն մէջ): Զեր այդ շարքն ալ անմիջապէս յետոյ կը հրատարակէի: Խելքը չի հասնիր թէ ինչպէս կրօնականներու հանդէսի մը մէջ «ծիծերով», դիրէ ու ծոցով, պաղիկներով» լի հեթանոս տաղեր կը հրատարակեն: ատկեց զատ, այդ հին տաղերու հրատարակութիւնը դժուար ու փափուկ գործ է, պէտք է վարժ ըլլալ: Թլկուրանցիի տաղերուն մէջ շատ սիալներ կային: Եթէ կ'ուզէք դրեցէք Բազմավիշպի խմբագրին որ այդ շարքը ինձի զրկեն, քանի որ իրենք ձեղմէ ուրիշ ընդարձակ յօդուածներ ունին հրատարակելու:

Սիրով ձերդ

Ա. Չոպանեան

(Նախորդին նման : Մեկ քերը երկուքի ծալլուած :)

Փարփակ, 2 նոյ. 1932

Սիրելի Պ. Քիւրտեսն,

Անսիսիտի 1—2 թիւը եղաւ ու կը ստանաք ձեր թիւը քիչ օրէն : Յանկարծ նշանաբեցի այսօր որ ձեր յօդուածին պատկերներէն մին թէրս (ծուռ) տպուեր է (Զորրորդ անգամն է որ կը պատահի ասիկա, եւ ամէն մնջամ տրպարանատէրը կը յայտարարէ թէ այլիս չպիտի պատահէի) : Երեք անգամ փորձերը տեսած եմ, էջերը կապուելէն ետքն ալ տեսած եմ, այզպիսի ունէ սխալ չկար : Մամուլի վրայ զնելէն ետքն է որ տպագրիչը քիչէն համած եւ տեղափոխած ըլլալու է : Շատ կը ցաւիմ : Կը վախնամ որ զրքոյկով տպագրութեան մէջ ալ նոյն սխալը կրկնուած կ'ըլլայ : Ես վազը կը մեկնիմ Հայոստան ինձէւան Արքազանին հետ, եւ 1 ու կէս կամ երկու ամէնէն ես կը դառնամ : Զեր հասցէն տուի Պ. Թիւրապեանին : Դուք ալ իր հասցէն ունիք, ուզզակի կը թրդթակցիք զրքոյկով համար :

Վերջին նամակէս ի վեր Բազմավէսլ եկաւ եւ տեսայ Քուչակին տաղաշարքը հոն հրատարակուած : Աւրեմն ճեզի ըրած թելադրութիւնս չեղեալ համարեցէք : Խրատական եւ խմառասիրական տաղեր են ամէնքն ալ այդ շարքին մէջ, որով կրնային Բազմավէսլի մէջ հրատարակուիլ : Դիտողութիւններ ըրած էք իմ հրատարակելու եղանակիս մասին, որոնք ճէցդ չեն : Տաղերու բաւական մէկ մասը վարիանդներ են իմ արդէն հրատարակածներուս, բայց կան շտահեր ալ որ նոր են եւ շատ արժէքաւոր : Դժրախտարար բազմաթիւ սխալներ կան հրատարակութեան մէջ, եւ մերթ շատ կարեւոր սխալներ : Թերեւս զրեմ այդ մասին Անհիտի մէջ :

Սիրալիր բարեւներով

Զերդ

Ա. Զաղանեսն

Ծանօթութիւն .— Գրեոյկս որ Պ. Թիւրապեան պիտի արտատպէր 100 օրինակով Անահիտի մէջ արդէն հրատարակուած, եւ նոյն շարուածքով, «Հայեա Արք Գեղարուեստի Յարաբերութիւնը» յօդուածս էր, որուն արտատպութեան համար 24 տոլար կը պահանջէր եւ որուն տասը դրկած էի սա պայմանով որ զրքոյկէն օրինակ մը բդրակազմ զրկուէր ինձի, որպէսզի մնացեալ գումարն ալ դրկէի : Պայմանն անոր համար էր որ ուրիշ «զրքոյկով» արտատպութիւններ . . . պարզապէս յօդուածին տպագրութեան աւելորդ օրինակներ էին : Պ. Թիւրապեան երբէք չդրկեց խոստացուած օրինակը, եւ ես ինչպէս որ յաջորդ նամակներէն կ'երեւի, չուղարկեցի մնացեալ 14 տոլարը : Այն ատեն բանի մը էջով արտասուզութեան համար պահանջուած 24 տոլարը բաւական գումար մըն էր :

(Գորշագոյն քղբատարական քացիկ : Անբուական :)

Սիրելի Պ. Քիւրտեան,

Երեք շաբաթէն աւելի է որ դարձած եմ Հայաստանէն : Ստացած եմ ձեր Հոկտեմբերի և Դեկտեմբերի ընթացքին ինձ ուղղած նամակները : Ծայրահեղօրէն զրադած եմ այս միջոցին, բայց քիչ օրէն մանրամասնաբար պիտի սպասաբաննեմ ձեր երկու նամակներուն : Այս երկուողը կը փութացնեմ միայն ինդրելու համար որ տարաբանատէր թիւրապեանին հաճիք դրելել խոստացուած գումարին մնացորդը, քանի որ ձեր յօդուածը պարունակող դիրաժէն 25 օրինակ զրկեր է ձեզի : Երբ դրամը ստանայ, 75 օրինակը պիտի զրկէ իսկոյն ձեզի :

Սիրալիր բարեհերով

Ա. Զապահեան

Դանիօրուրիսն.— 25 օրինակը որ իբր քէ դրկուած էր ինձի, երբէք չստացայ :

(Նախորդին նման :)

Սիրելի Պ. Քիւրտեան,

Ստացած եմ ձեր Դեկտ. 31 թուակիր նամակը եւ երկու օրինակութիւնները հին բնագիրներու որ շահեկան են, զանոնք պիտի հրատարակեմ, ոչ մամուլի տակ եղած թիւին մէջ, այլ յաջորդին : Ներկայ միացեալ թիւր, որ շատ խճողուած է արդէն, լոյս կը տեսնէ Զատիկիէն ևսը :

Կը յուսամ որ թիւրապեանին դրամը եւ մեր հանգանակութեան ձեր 10 տոլարը արգէն ձամբայ հանած էք :

Ա. Տէր Յակոբեանը ոչինչ ըստ ինձի ձեր մասին :

Կը յուսամ որ Անահիտի նոր թիւը լոյս տեսնելէն առաջ՝ եղած զումարով կը զնենք հարկ եզած իրեղիններէն մաս մը եւ կը զրկենք Երեւան՝ ինստիտութին :

Սիրոյ ձերդ

Ա. Զապահեան

Դանիօրուրիսն.— Հնուր . Պահպանուրեան հանգանակութեան իմ խոստացած 10 տոլարը դրկուած էր իրեն :

Հրամա . Յ. Քիւրտեան

(Դար . 2)